ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

# ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

## ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈԱԼԻՑԻԱՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԿԸՆՏՐԱՆՔԸ

19 Սայաթ Նովա, Երեւան
Հեռ.՝ +3741 58-26-38, Ֆաքս՝ +3741 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Ակնհայտ է՝ ահաբեկչության դեմ պայքարում Հայաստանը չի կարող իր տեղը չունենալ: Եթե հակաահաբեկչական քաղաքականության առանձին ուղղություններում մեր երկրի կողմից քայլեր ձեռնարկվել են, ապա միջազգային կոալիցիաներին, մասնավորապես Իրաքում ընթացող գործընթացներին, Հայաստանի ուղղակի մասնակցությունը լուրջ մտորելու թեմա է: Մի բան պարզ է. 2 մարդ ուղարկել, 30, 50, թե հարյուրներ՝ կարևոր չէ: Քայլն ազդակ է:

**Նախաձեռնությունը հստակ է.**

Հայաստանը չի ցանկանում մասնակցել Իրաքի պատերազմին, Հայաստանը ցանկություն է հայտնում մասնակցել լոկ Իրաքի վերականգնմանը, ինչի համար պատրաստ է ուղարկել բժիշկներ ու սակրավորներ: Փաստացիորեն քայլը կարող է ունենալ զուտ մարդասիրական կամ օգնության բնույթ: Սա կարելի է և պետք է իրոք ճիշտ ներկայացնել և՛ Հայաստանի և՛ միջազգային հանրությանը, և՛ Իրաքի հայ համայնքին: Ի վերջո մենք մեծաթիվ համայնք ունենք Իրաքում, որին պարտավոր ենք և իրավունք ունենք օգնելու: Ճիշտ մատուցելու դեպքում սա կարող է ճիշտ ընկալվել:

Մասնակցելով իրաքյան գործընթացներին՝ Հայաստանը կհռչակի, որ ինքը մտնում է, կամ առնվազն ցանկանում է մտնել «ակումբ», իսկ եթե դու «ակումբի» անդամ ես, ապա միշտ ունես քեզ հասանելիքը, այլապես՝ դուրս ես խաղից:

Մասը լինել, նշանակում է փորձ ձեռք բերել. նշանակում է նախ ինքնաստուգում, ապա՝ փորձ: Հայ բժիշկներն ու սակրավորները կարող են կողք կողքի աշխատել այս պահին աշխարհում լավագույնները համարվողների հետ, նոր փորձառություն կուտակել ու վերադառնալով՝ տարածել: Յուրաքանչյուր մասնակից հետ կգա իր՝ սեփական պատմությամբ, իսկ պատմությունները նոր ոգի կարող են հաղորդել: Հայաստանը, որ զգալի համայքնի ունի Իրաքում, պիտի մշտական թարմ ու անաչառ՝ սեփական տեղեկատվություն կարողանա ստանալ, այնինչ շատ հաճախ նույնիսկ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունը մեր հայրենակիցներին վերաբերող «տաք» տեղեկատվության կարիք ունի և ստիպված հենվում է այլ երկրների տեղեկատվական աղբյուրների վրա:

**Նախաձեռնությունը հստակ չէ.**

Հետպատերազմական վերակառուցման մասին խոսելն անիմաստ է. պատերազմն ընթանում է, իսկական պատերազմ, որի ավարտը դեռ չի էլ նշմարվում: Թեժ պատերազմի ժամանակ մասնակցել հետպատերազմյան վերականգնմանը առնվազն անտրամաբանական է (cotradictio in adjecto):

*Վտանգի թիրախները.*

1. Հայկական սփյուռքը (մոտ 20 հազար Իրաքի տարածքում, հարյուր հազարներ մյուս արաբական երկրներում)
2. Իրաք ուղարկվող խումբը,
3. ՀՀ ողջ տարածքը:

Այս քայլը լուրջ փորձաքար է լինելու մեր երկրի համար, այն կարող է նաև տանել փակուղային իրավիճակի:

Ի տարբերություն Իրաքում գոյություն ունեցող այլ ազգային փոքրամասնությունների, հայ համայնքը բաց թիրախ է, որը ցրված լինելու պատճառով չի տիրապետում ինքնապաշպանության բնական միջոցների: Վտանգի տակ ենք դնում իրաքահայությանը, Հայաստանը, իսկ ի՞նչ ենք ակնկալում: Ո՞ր արժեքների համակարգում ենք մեզ պատկերացնում, որ այդպիսի նախաձեռնությամբ (ինքնա)հաստատման ենք ձգտում այդ համակարգում:

Հայաստանի մասնակցությունը գլխացավանք կարող է դառնալ հենց Ամերիկայի համար: Խիստ կասկածելի է, որ ԱՄՆ կողմից լուրջ ճնշում է եղել այս հարցում: Փոքր Հայաստանն իր փոքր շահերով փորձում է մտնել մեծ խաղի մեջ հանուն ինչ-որ բանի, որն իրականում մեծապես անորոշ է:

*Սփյուռք.* Եթե Հայաստանը չի կարողանում դրական բան անել հայկական սփյուռքի համար, ապա գոնե պիտի խուսափի առանձին գաղթօջախների կյանքը վտանգի տակ դնող քայլերից: Խնդիրը հարկ է քննարկել Հայաստան-սփյուռք հարաբերությունների համատեքստում. այդ դաշտը միայն մարզական ու մշակութային խաղերը կամ թելետոնները չեն, սփյուռքը միայն բարեկեցիկ լոսանջելեսյան համայնքը չի: Պետությունը, եթե տարբեր ծրագրերի համար օժանդակություն է ստանում իր սփյուռքից, պարտավոր է այդ նույն սփյուռքի հանդեպ նաև պատասխանատվություն ստանձնել: Այսօր Իրանի, Սիրիայի, Լիբանանի և տարածաշրջանի մյուս պետությունների հայ համայնքները Հայաստան պետության կարիքն ունեն: Վերջերս Հայաստան տեղափոխված իրաքահայերը պնդում են, որ Իրաքի յուրաքանչյուր հայի փափագն օր առաջ հայրենիք վերադառնալն է:

Հայերն արաբական աշխարհում ունեն համագոյակցության հազվագյուտ նախադեպ: Այն վտանգելու համար լրջագույն հիմքեր են պետք:

**Աշխարհաքաղաքականություն.** Այսօրինակ որոշման կայացումն արվում է ոչ միայն այսօրվա համար: Դա ավելի շատ ապագային ուղղված որոշում է, որ պիտի մատնացույց անի Հայաստանի ընտրությունը, ինչպե՞ս է այս երկիրը պատկերացնում իր տեղն ու դերը, իր ուղին աշխարհում: Այսպիսի համատեքստում չի կարելի հարցին ծայրահեղական բնույթ տալ՝ հանգեցնել լոկ «այո»-ի կամ լոկ «ոչ»-ի, քանզի հայտնի է, որ քաղաքականությունը ծայրահեղություններ չի հանդուրժում:

**Իրական քաղաքականություն.** Արդյո՞ք Հայաստանն իրապես շահագրգռված է այս քայլում: Միգուցե հաշվարկը եղել է հենց այն տարբերակը, որ հարցը մերժվի ՀՀ խորհրդարանի կողմից, ինչը թույլ կտա ինչ-որ քաղաքական խնդիրներ լուծել բոլորվին այլ հարթություններում:

ԱՄՆ նախագահական վերջին ընտրություններից հետո Հայաստանի ու հայկական լոբբիի համար դեպի Սպիտակ տուն տանող որոշ դռներ փակվեցին (անշուշտ, կարելի է պնդել նաև, որ դա այդպես չէ, և բերել բազմաթիվ պատճառաբանություններ): Այսպիսի քայլը, միգուցե, նպատակ ունի դառնալու փակված դռներ բացելու՞ նախաձեռնություն:

**Հասարակական կարծիքի պատրաստում:** Հասարակական կարծիքը Հայաստանում պատրաստ չէ այսօրինակ որոշման և… չի էլ պատրաստվում:

*Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ նոյեմբերի 12-ին «Հակահաբեկչություն, իրական քաղաքականություն և մարդու իրավունքներ. միջազգային կոալիցիաներին Հայաստանի մասնակցության երկընտրանքը» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, մամուլի և միջազգային կառույցների ներկայացուցիչներ:*